ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՉԵՌՆՈԲԻԼՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՌԱԴԻԱՑԻՈՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՈՒ ՎԹԱՐՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՌԱԴԻԱՑԻԱՅԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

ելնելով Չեռնոբիլյան եւ այլ ռադիացիոն աղետների ու վթարների, ինչպես նաեւ միջուկային փորձարկումների արդյունքում ռադիացիայի ներգործությանը ենթարկված քաղաքացիների (այսուհետ՝ ռադիացիայի ներգործությանը ենթարկված քաղաքացիներ (անձինք)) իրավունքների եւ առողջության պաշտպանության անհրաժեշտությունից,

գիտակցելով, որ յուրաքանչյուր Կողմ անմիջական պատասխանատվություն է կրում ռադիացիայի ներգործությանը ենթարկված իր քաղաքացիների սոցիալական պաշտպանության եւ առողջության պահպանության համար,

ճանաչելով ռադիացիայի ներգործությանը ենթարկված քաղաքացիների վնասի, նյութական ու բարոյական կորուստների փոխհատուցման իրավունքը,

ձգտելով ռադիացիայի ներգործությանը ենթարկված քաղաքացիների առողջության պահպանության եւ սոցիալական պաշտպանության համար գործողությունների համաձայնեցմանը, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, լիովին ինքնուրույնություն ունենալով ռադիացիայի ներգործությանը ենթարկված քաղաքացիների սոցիալական պաշտպանության, նրանց առողջության պահպանության հիմնախնդիրների լուծման հարցերում, համաձայնեցնում են իրենց գործողությունները, որոնք վերաբերում են այդ անձանց առողջության պահպանության եւ սոցիալական պաշտպանության անհրաժեշտ հիմնական մակարդակի ապահովմանը:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը.

մշակում են սկզբունքներ եւ չափանիշներ ռադիացիայի ներգործությանը ենթարկված անձանց կարգավիճակը սահմանելու համար, այդ անձանց, ինչպես նաեւ կերակրողին կորցնելու դեպքում նրանց ընտանիքների անդամների համար ապահովում են սոցիալական պաշտպանության, առողջության վերականգնման եւ պահպանության փոխհամաձայնեցված հիմքեր,

համադրում են մոտեցումները Չեռնոբիլյան եւ այլ ռադիացիոն աղետների ու վթարների, ինչպես նաեւ միջուկային փորձարկումների հետեւանքների հետ հիվանդությունների ու հաշմանդամության պատճառական կապի սահմանման համար,

միջոցառումներ են իրականացնում բժշկական, սանատորաառողջարանային, առողջարանային եւ այլ հաստատությունների ու կազմակերպությունների գործունեության արտոնյալ մեխանիզմի ստեղծման համար, որոնք անմիջապես ապահովում են ռադիացիայի ներգործությանը ենթարկված անձանց առողջության պահպանությանն ուղղված միջպետական խնդիրների լուծումը,

համադրում են այդ դասերի քաղաքացիների համար բժշկական եւ առողջարանային միջոցառումներ՝ ազգային մասնագիտացված հաստատությունների ու կազմակերպությունների հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման նպատակներով,

միջոցներ են ձեռնարկում ռադիացիայի ներգործությանը ենթարկված անձանց փոխհատուցման եւ արտոնությունների իրավունքը կարգավորող օրենսդրության միասնականացման համար,

իրականացնում են իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվության անհատույց

փոխանակում, որը վերաբերում է Չեռնոբիլյան եւ այլ ռադիացիոն աղետների ու վթարների, ինչպես նաեւ միջուկային փորձարկումների հետեւանքներին:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի իրականացմանն ուղղված ջանքերի համակարգման նպատակով Կողմերն իրենց լիազոր ներկայացուցիչներից ստեղծում են միջպետական մարմին:
Այդ մարմնի գործունեությունը կարգավորվում է Կանոնակարգով, որը հաստատում է Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի իրականացման եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծման համար ռեսուրսների համախմբման գործում փոխադարձ օգնություն ցուցաբերելու նպատակներով՝ Կողմերը կարող են ձեւավորել հատուկ հիմնադրամներ:
Հատուկ հիմնադրամների ձեւավորման եւ օգտագործման կարգը սահմանվում է շահագրգիռ Կողմերի միջեւ կնքվող առանձին համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը խորհրդակցություններ կանցկացնեն եւ կհամակարգեն իրենց գործողությունները միջազգային համագործակցությունում, ինչպես նաեւ ռադիացիայի ներգործությանը ենթարկված անձանց համար միջազգային մարդասիրական օգնության օգտագործման բնագավառում:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ մասնակից պետությունների ներպետական ընթացակարգերի կատարումը հավաստող երեք Կողմերի ծանուցումները ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթղթերը ավանդապահին փոխանցելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ հինգ տարի ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է հայտարարել սույն Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին՝ համապատասխան ժամանակաշրջանի ավարտից առնվազն վեց ամիս առաջ այդ մասին ավանդապահին գրավոր ծանուցելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի սեպտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թվականի օգոստոսի 11-ից: